ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

21.04.2022թ. Թիվ 59/0

Հյուսիսային համալսարան բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելության 1–ին փուլը կազմակերպելու, հեռակա ուսուցմամբ 1–ին փուլով ընդունված դիմորդների և միասնական քննակարգով Հյուսիսային համալսարանի առկա ուսուցմամբ ընդունված դիմորդների համար ուսման վարձի զեղչերի կիրառման գործընթացը կանոնակարգելու նպատակով

Հրամայում եմ

1. Հյուսիսային համալսարանի ռեկտորի 2022 թվականի մարտի 10 N50/0 հրամանով հաստատված՝ «Հյուսիսային համալսարանում բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելության կարգի» 6–րդ կետի հիմքով 2022-2023 ուստարվա համար բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելության 1–ին փուլի քննությունների կազմակերպման ժամկետ սահմանել ս.թ. մայիսի 23-ից հունիսի 3–ը:
2. Հիմք ընդունելով Հյուսիսային համալսարանում ուսանողական նպաստի ձևով իրականացվող ուսման վարձի փոխհատուցման (անվճար համակարգ) և զեղչերի կիրառման գործընթացը կանոնակարգելու մասին Հյուսիսային համալսարանի ռեկտորի 2020 թվականի մայիսի 20–ի N61/0 հրամանի 1.4. կետով նախատեսված՝ Հյուսիսային համալսարանի ընդունող հանձնաժողովի առաջարկը, սահմանել, որ 2022-2023 ուստարում հեռակա ուսուցման ընդունելության առաջին փուլով ընդունված հանրակրթական դպրոցների 2021-2022 ուստարվա շրջանավարտ հանդիսացող դիմորդների և առկա ուսուցմամբ Հյուսիսային համալսարան ընդունված դիմորդների համար ուսումնառության 1–ին կուրսի համար նախատեսել ուսման վարձի 50 տոկոս զեղչ:

Հյուսիսային համալսարանի ընդունող հանձնաժողովին՝ սահմանված կարգով իրականացնել ընդունելության 1–ին փուլի կազմակերպման գործընթացը:

4. Հյուսիսային համալսարանի Լրատվության և հասարակության հետ կապերի ուսումնապրակտիկ կենտրոնի ղեկավարին՝ 1 օրյա ժամկետում ապահովել սույն հրամանի 1–ին և 2–րդ կետերի բովանդակության հրապարակումը համալսարանի պաշտոնական կայքում, ինչպես նաև համալսարանի պատասխանատու ստորաբաժանումների հետ քննարկել, նախապատրաստել և 10 օրյա ժամկետում հանրակրթական ուսումնական հաստատությունների պաշտոնական էլեկտրոնային հասցեների ուղղել շրջաբերական գրություններ, սույն հրամանով նախատեսված՝ Հյուսիսային համալսարանի հեռակա ուսուցման 1–ին փուլի ընդունելության ընդհանուր պայմանների, առկա և հեռակա ուսուցմամբ ընդունված դիմորդների համար նախատեսված զեչերի վերաբերյալ իրենց ղեկավարած ուսումնական հաստատությունների աշակերտների շրջանում տեղեկատվություն տարածելու խնդրանքով:

ՌԵԿՏՈՐ Մ.ՄԱԿԻՉՅԱՆ